



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2016 թվականի N 984 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒ
«ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒ-
ԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՆԹԱՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում համայնքների աղբահանության աշխատանքների բարելավման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության կառավարության՝ ի դեմս ֆինանսների նախարարության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի ապրիլի 5-ին կնքված վարկային պայմանագրի շրջանակներում «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ենթավարկային պայմանագրի կնքմանը՝ տրամադրելով վարկային պայմանագրով սահմանված վարկային գումարն ամբողջությամբ՝ սահմանված դրույքաչափը տասնհինգ տարի մարման ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշման 1-ին կետով հատկացված գումարը «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» սահմանափակ պա-

տասխանատվությամբ ընկերությանը հատկացնել ենթավարկային պայմանագրի հիման վրա՝ առանց պարտավորության կատարման ապահովման միջոցի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2016 թ. սեպտեմբերի 30
Երևան



Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ